«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է «Երևանի Շառլ Ազնավուրի անվան
մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2024թ. հուլիսի 4-ի N6/2024 որոշմամբ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՆԱԽԱԲԱՆ

Սույնով սահմանվում է «Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների քաղաքականությունը:

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հետազոտություն.
Մշակույթի և արվեստի ոլոտում հետազոտությունը կիրառվում է կատարողական, երաժշտատեսական, գեղագիտության ոլորտներում:
Ստեղծագործական աշխատանք.
Մշակույթի և արվեստի ոլորտում հիմնարար մոտեցում է, վերաբերվում է կատարողական, տեսական, գեղագիտական շերտերին:
Վերլուծական աշխատանք.
Կրթական գործընթացներում կիրառվում է ուսումնասիրման, ճանաչման, տարբերակման, մասնավորեցումներ և ընդհանրացումներ կատարելու, ստեղծագործական գործընթացներում կիրառելու նպատակով:
Հետազոտությունը,ստեղծագործական և վերլուծական սկզբունքները՝ համապատասխան մեթոդաբանություններով, կիրառվում են թե՛ դասավանդողների, թե՛ ուսանողների շրջանում, ուսումնական և ուսումնառության գործընթացների ողջ սպեկտրով:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարողական («Վոկալ արվեստ», «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ», «Պարարվեստ», «Դերասանական արվեստ», «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում , կոնսերվացում և պահպանում») մասով իրականացվում է հետազոտական աշխատանք՝ կատարողական կերպերի, սկզբունքների, մեթոդների, ավանդույթների համեմատական վերլուծության, մասնագիտական երաժշտական մոտեցումների համաձայն, դրանց տեղայնացման նպատակով:
Արվեստի ճյուղերի և գեղագիտական ոլորտներում հետազոտությունը նույնական է գիտահետազոտական եզրույթին, քանի որ այն թե՛ տեսական, թե՛ պատմական, թե՛ փիլիսոփայական ուղղություններով գիտական կանոնակարգված գործընթաց է:
Կրթական գործընթացում հետազոտությունը կիրառվում է ուսանողի գիտելիքի գնահատման, մասնագիտական առաջընթացի, ճանաչողական ունակությունների, գիտելիքի յուրացման և կարողությունների ձևավորման տեխնիկաների տիրապետման, կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը գնահատելու մեջ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հետազոտական և ստեղծագործական մոտեցումներըն ու գործելակերպը մշակույթի և արվեստի մասնագիտական կրթության ոլորտում մասնագետի ձևավորման հիմնական գրավականն են: Միակցված՝ դրանք ապահովում են մի կողմից՝ լավագույն ավանդույթի փոխանցում, մասնագիտական կայունություն, մյուս կողմից՝ ինքնուրույնության և ինքնտիպության ձևավորում:

Հետազոտությունն ու ստեղծագործական աշխատանքը Քոլեջում ծառայում են կրթության իրականացմանը՝ անընդհատ կիրառմանը:

Ուսանողներին հանձնարավում է

▪ուսումնասիրել տվյալ ստեղծագործության դարաշրջանը՝ ոճական, գեղագիտական, պատմական առումներով,

▪ ուսումնասիրել ըստ ուղղվածության արվեստի ստեղծագործական գործունեությունը, գեղարվեստական սկզբունքները և այլն,

▪ուսումնասիրել ստեղծագործողներին և/կամ նույն ժամանակաշրջանի այլ ստեղծագործություններ, ճանաչել, տարբերակել գեղարվեստական ոճերը,

▪ ուսումնասիրել նույն ստեղծագործության տարբեր կատարումներ, ճանաչել, տարբերակել կատարողական սկզբունքները և մեթոդները,

▪ վերլուծել ստեղծագործությունը բովանդակային և կերպարային առումով,

▪ գրել աննոտացիաներ ստեղծագործութայն մասին,

▪ ընտրել ստեղծագործության յուրացման մեթոդներ,

▪սահմանել տեխնիկական և գեղարվեստական խնդիրների լուծման առաջնահերթությունները , քայլերը,

▪ կազմել ստեղծագործության կատարման քայլաշար,

▪ աշխատել բեմական հուզմունքի հաղթահարման վրա՝ հաշվի առնելով իր անձի առանձնահատկությունները,

▪ այլ խնդիրներ և ենթախնդիրներ:

Նշված խնդիրները լուծվում են դասախոսի և ուսանողի համատեղ աշխատանքի միջոցով: Դասախոսի խնդիրն է՝ ուսանողի մոտ ձևավորել ստեղծագործության յուրացման, գեղագիտական խնդիրների ուսումնասիրման, վերլուծման, հետազոտման և ճանաչման կարողություններ՝ դրանք մասնագիտական գործունեությունում կիրառելու նպատակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐՈՒՄ

Հետազոտական և ստեղծագործական մեթոդների արդյունավետությունը Քոլեջը գնահատում է՝կատարելով ուսանողների մասանգիտական պատրաստվածության/որակների կատարելագործման վերլուծություն, որի շրջանակներում դիտարկվում են.

▪ուսանողների առաջադիմությունը,

▪մասնակցությունը միջոցառումների, մրցույթների, մրցույթ-փառատոնների՝ հաշվի առնելով դրանց արդյունքները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն քաղաքականությունն ուժի մեջ է մտնում հաստատման հաջորդող օրվանից:

2.Դրանում արվող փոփոխությունները և լրացումները կազմում են սույն փաստաթղթի մաս: